

16907

361

7-79

1826

ՓԱՐԻՁ, 2 Հոկտեմբեր, 1926.

Սիրելի հայրենակիցներ,

«Որբերու Կիրակին» տարուէ տարի աւելի ընդարձակ համեմատութիւններ կ'առնէ:

Միայն Միացեալ Նախանգներու մէջ 900 քաղաք յանձն առած են Ոսկեղէն Պատուիրանքին հետեւիլ, եւ անցեալ տարի աւելի քան յիսուն զանազան երկիրներու մէջ Գեկտեմբերի առաջին Կիրակին որբերուն յատկացուեցաւ:

Տիեզերական համերաշխութեան ասկից աւելի գեղեցիկ օրինակ կարելի չէ գտնել: Որպէսզի Հայաստանի ամերիկեան որբանոցներուն որբերը կարենան իրենց հանապազօրեայ հացը ուտել, ջիւղի տղաքը որբերու Կիրակին կամովին կը հրաժարին իրենց անուշեղէնէն: Ոչ միայն ձաբոնի Աւագանի ժողովին նախագահ իշխան Թօկակալ կարեւոր գումար մը նուիրեց Մերձաւոր Արեւելքի որբերուն համար, այլ ձաբոնի դպրոցական աղջիկները ամէն տարի իրենց փոքրիկ խնայողութիւնները կը ղրկեն հայ որբուհիներուն ի նպաստ:

Եթէ աշխարհի ամէն կողմը մեծ ու փոքր կը մասնակցին ընդհանուր եղբայրակցութեան այս գործին, ո՛րքան աւելի ուրեմն պէտք է այն մօտիկ ըլլայ մեր սրտին, քանի որ անոր բարիքներէն օգտուողները մեր ցեղին զաւակներն են, մեր մարմինն մարմինը, մեր արեան արիւնը:

Մեր մէջ շատեր են որ, տարուոյն ընթացքին, իրենց հոգերով եւ գործերով ծանրաբեռնուած, կրնան մոռնալ իրենց պարտականութիւնը իրենց ցեղին անոք եւ անպաշտպան զաւակներուն հանդէպ: Բայց տարին գոնէ օր մը, այն է Գեկտեմբերի առաջին Կիրակին, պէտք է իջնեն իրենց խղճին խորը, մտածեն թէ ըրի՞ն ինչ որ կրնային ընել իրենց ազգին դժբախտ մանկութեանը համար, եւ անմիջապէս ղրկեն իրենց բաժինը, որքան ա՛լ համեստ ըլլայ այն, Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչութեան կամ Շրջանակային ցանձնաժողովներուն եւ Մասնաժողովներուն, որոնք Որբերու Կիրակին առթիւ կատարուելիք հանգանակութեան գործը ստանձնած են:

Ըրէք ուրիշներուն ինչ որ կ'ուզէիք որ ընէին ձեզի, կամ ձեր զաւակներուն, եթէ անոնք ալ բաղդին անողոք հարուածովը օգնութեան եւ աջակցութեան կարօտ վիճակի մէջ գտնուէին: Ահա Ոսկեղէն Պատուիրանքը, զոր պէտք է սրբութեամբ պահել:

Որբերու Կիրակին այս տարի կը հանդիպի Գեկտեմբեր 5ին: Այդ օրը թող ամէնուն համար առիթ մը ստեղծէ՝ իրենց պարտականութիւնը կատարելու մեր որբերուն հանդէպ:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

2002

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ



52875-սկ

38794-67

2013

ՀՀ Ազգային գրադարան
2029/ NL0050304

